Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Նորվեգիայի Թագավորություն, ք. Օսլո, 4-9 հունիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) կառավարիչների խորհրդի 76-րդ նիստին և Կենտրոնի ռազմավարական ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խմբի հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

1. ՄԳՏԿ 2022 թվականի գործունեության արդյունքները, բյուջեն, ՄԳՏԿ քարտուղարության գործունեության հաշվետվությունը,
2. ՄԳՏԿ ճյուղային կառույցների 2022 թվականի հաշվետվությունները,
3. ՄԳՏԿ 2023 թվականի ռազմավարական միջոցառումների ճանապարհային քարտեզը և ժամանակացույցը,
4. Նոր պետությունների (Ուզբեկստան, Կամերուն, Քենիա, Նիգերիա, ՄԹ) ՄԳՏԿ անդամակցության գործընթացի մասին զեկուցում,
5. Այլ ընթացիկ հարցեր

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ ՄԳՏԿ 2022 թվականի գործունեության արդյունքները, բյուջեն, ՄԳՏԿ քարտուղարության գործունեության հաշվետվությունը, ՄԳՏԿ 2023 թվականի ռազմավարական միջոցառումների ճանապարհային քարտեզը և ժամանակացույցը: Հանդիպման ընթացքում ներկայացվել

են ՄԳՏԿ հայաստանյան գրասենյակի 2022 թվականի հաշվետվությունը և 2023 թվականի գործունեության ծրագիրը:

ՄԳՏԿ գործադիր տնօրենի և ՄԳՏԿ Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցչի հետ աշխատանքային քննարկման ընթացքում Ս. Հայոցյանն առաջարկել է դիտարկել ՄԳՏԿ գլխամասային գրասենյակը Ղազախստանի Աստանա քաղաքից տեղափոխել Երևան՝ կապված ՄԳՏԿ աշխարհագրության ընդլայնման հետ: Հարցը կքննարկվի համապատասխան գերատեսչություններում և այնուհետև հետագա հանդիպումների ընթացքում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան հետազոտությունների ազգային հիմնադրամի նախագահ Է.Աստախիշվիլիի հետ քննարկվել են գիտության ոլորտում հայ-վրացական համագործակցությանն ուղղված հետագա քայլերը, ստորագրվել է 2022 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի կողմից ստորագրված Փոխըմբռնման հուշագրի շրջանակում «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» ծրագիրը: Վերջինիս շրջանակում 2023 թվականի աշնանը նախատեսվում է հայտարարել համատեղ նախագծերի աջակցության առաջին մրցույթը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակիցները կշարունակեն աշխատանքները ՄԳՏԿ ընձեռած հնարավորությունների շրջանակներում, ինչպես աշխատանքային խբերի, այնպես էլ կառավարիչների խորհրդի կազմերում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

12.06.2023 թ.